զնաս մեզ, եթէ չնորհեսցէ մեզ Տէր կեանս և կենդանութիւն, յառաջ քան զսօն Ծննդեան Փրկչին մերոյ, աներկրայ լինիմք 'ի կողմանաղ յայդոսիկ. յուսով եմք թէ յայնժամ խորհելով 'ի միասին, դիւրութեամբ գտանեմք զելս հնարից գործոյս։ Ահա այս է ճշմարիտ կարծիքն մեր, և եթէ հաճոյ թուեսցի ձեզ՝ պատասխանեցէք փութով 'ի ձեռն Փոխանորդին մերոյ։ Աղաչեսցուք զԱստուած զի տայցէ բարի վախճան գործոյս, և առաջնորդեսցէ 'ի բարին՝ ըստ մեր յուսոյ և խորհրդոյ։ Օրհնութեամբ ողջունեմք զսիրելի բարեկամն մեր զմահտեսի Սեդրոսն, նոյնպէս և զպատուարժան միաբանութիւնս ձեր։ Մնամ սիրեցեալ ձեզ 'ի Քրիստոս։

1728 Նոյեմբեր 8. 'ի Պոլսէ։

Երուսաղէմի Պատրիարք Խրիսանթոս։

Ի հասանիլ թղթոյս 'ի Կոստանդինուպոլիս առ Յովհաննէս Պատրիարք, գրեաց և ինքն հանգոյն սմին թուղթ, և ետ ցՅոյնս առաքել յԵրուսաղէմ։ Իբրեւ դարձաւ Պատրիարքն Յունաց 'ի քաղաքն կայսերանիստ, մատուցին 'ի Դուռն զթուղթն, զոր պատրաստեալ էին յառաջագոյն. եւ 'ի զգացուցանել զայն Արքային Ահմետայ, հաճեցաւ՝ մանաւանդ թէ զարմացաւ իսկ ընդ այնպիսի անակնուն-ելի միաբանութիւնս երկուց ազգաց. և հրամանաւ նորին գրեցաւ հրովարտակ՝ ըստ մտաց աղերսագրոյն, յորում պատուիրէր առ ամենայն դատաւորս և գործավարս Երուսաղէմի, արթնութեամբ եւ զգուշութեամբ 'ի գլուխ տանել զհրաման Արքային։ Կարգեցին նաեւ ոստիկան և վերատեսուչ գործոյս՝ զայրն հաւատարիմ Իպրահիմ Աղա. գրեաց նաեւ վասն այսր խնդրոյ գիր հրամանի, (Պույրուլտի) նա ինքն Վէզիրն մեծ Իպրահիմ Փաշա, և յանձն արարեալ 'ի ձեռս ոստիկանին, առաքեցին յԵրուսաղէմ։ Եւ նորա ճանապարհ արարեալ եհաս անդ 'ի 16 ամսեանն Մարտի, և մատոյց զգրեանս դատաւորի քաղաքին, և նա կոչեաց զՓոխանորդն Յունաց զՄելեթիոս, և զՓոխանորդն Հայոց Հաննա կամ Յովհաննէս եպիսկոպոս, և ետ ընթեռնուլ առաջի նոցա զհրովարտակն Արքայի, և զգիր մեծի